ԽԱՂԻ ԴԱՍՏԻԱՐԱԿՉԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ԱՐԺԵՎՈՐՈՒՄԸ Խ. ԱԲՈՎՅԱՆԻ, Ղ. ԱՂԱՅԱՆԻ, ՀՈՎՀ. ԹՈՒՄԱՆՅԱՆԻ ՍՏԵՂԾԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ

Հարոյան Լիզա
Գրիգորյան Զարինե

Հանգուցային բառ՝ *դաստիարակություն, սեր, արժանապատվություն, զարգացում, գիր, լեզու*

Երեխայի խաղի մեջ խոր ստեղծագործական բովանդակություն կա: Խաղի մանկավարժական նշանակությունը ընդգծել և հետաքրքիր ու օգտակար մտքեր են արտահայտել Յա. Ա. Կոմենսկին, Ժ.-Ժ. Ռուսոն, Կ. Ուշինսկին, Ա. Մակարենկոն, Յա. Կորչակը և շատ ուրիշներ: Խաղի դաստիարակչական նշանակության ուսումնասիրությամբ զբաղվել են նաև հոգեբաններ, սոցիոլոգներ, փիլիսոփաներ, ազգագրագետներ, արվեստագետներ, որոնք հիանալի գիտեն երեխայի ներաշխարհը:

Մարդու կյանքի յուրաքանչյուր փուլ ունի իր առանձնահատկությունները և առաջատար գործունեությունը: Կյանքի առաջին տարիներին երեխայի մեջ տեղի են ունենում ոչ միայն ֆիզիոլոգիական, այլև մտավոր բնույթի կարևոր փոփոխություններ: Նա ձգտում է ինքնուրույնության, ներաշխարհում կատարվում են հոգեբանական բարդ երևույթներ, որոնք բացահայտվում են տարբեր խաղերում: Յուրաքանչյուր խաղային հարաբերություն վերարտադրում է իրականության մեջ գոյություն ունեցող սոցիալական այնպիսի փոխհարաբերություններ, որոնց շնորհիվ լայն հնարավորություն է ստեղծվում երեխայի դաստիարակության համար: Երեխան ընդհանուր ընդօրինակումից անցնում է սոցիալական ազդեցությունների ընտրողական յուրացման, որի արդյունքում որակապես փոխվում է կապը հասարակության հետ: Մեծահասակի նպատակաուղղված ներգործությունների շնորհիվ երեխան խաղի միջոցով յուրացնում է սոցիալական մեծ արժեք ունեցող բարոյական որակներ՝ ընկերասիրություն, մարդասիրություն, բարություն, ազնվություն, հայրենասիրություն, կազմակերպվածություն և այլն:

Խաղի դաստիարակչական նշանակության և հայեցի դաստիարակության հիմնահարցը կարևորվել է նաև բազմաթիվ հայ գրողների, մանկավարժների, հոգեբանների, մտածողների կողմից:

Հայ մեծ լուսավորիչ, գրող, մանկավարժ Խաչատուր Աբովյանը մշտապես ընդգծում էր խաղի դաստիարակչական նշանակությունը՝ համոզված, որ երե-

խան կյանքի և բնության վերաբերյալ առաջին և հավաստի տեղեկությունները ստանում է խաղի միջոցով:

Լինելով ի բնե զգայուն խառնվածքի տեր անհատ՝ Աբովյանը կարողանում է թափանցել երեխաների ներաշխարհը. նրա փոքրիկ հերոսներ Եղիսաբեթի, Ստեփանի, Վարդանի հետաքրքրասիրությունը, տրամաբանությունը, մտածելու ընդունակությունը ձևավորվել են մեծերի պատմությունների, զրույցների, կյանքի հետ շփվելու և, անշուշտ, խաղերի ներգործության շնորհիվ:

Խոսելով նախադպրոցական տարիքի երեխաների դաստիարակության ուղիների և խնդիրների մասին՝ Աբովյանն ընդգծում էր հետաքրքրաշարժ զրույցների, պատմությունների, ժողովրդական բանահյուսության, չափածո ստեղծագործությունների հսկայական նշանակությունը երեխային ոչ միայն գեղագիտական հաճույք պատճառելու գործում, այլ նաև նրա մտահորիզոնի ընդլայնման, աշխարհաճանաչողության խորացման, կյանքի ու բնության վերաբերյալ իմացության շրջանակների լայնացման առումով: Երեխան կյանքի դասեր է առնում և բնության հետ ճիշտ հարաբերվելու անմոռաց գիտելիքներ ձեռք բերում հեքիաթների, զրույցների և իրեն շատ սիրելի խաղերի միջոցով: Աբովյանը խորհուրդ էր տալիս հարգել երեխայի անհատականությունը, խաղի միջոցով դաստիարակել նրան, սովորեցնել ճշմարտություն, ազնվություն, համեստություն, աշխատասիրություն: Աբովյանը պնդում էր, որ բարոյական լավագույն որակներն ու դրական սովորությունները վաղ մանկական տարիքում երեխայի սեփականությունն են դառնում բազմիցս կրկնվող խաղերի միջոցով: Ընդսմին՝ Աբովյանը երեխաների դաստիարակության մեջ մեծ տեղ էր հատկացնում ոչ միայն անհատական մանկական խաղերին, որոնք ինքնին ստեղծագործականության մեծ լիցք և հնարավորություններ են բովանդակում, այլև առանձնահատուկ կերպով կարևորում էր ազգային խաղերի դերը մատաղ սերնդի հայեցի դաստիարակության, ազգային ոգին պահպանելու գործում:

Աբովյանը պահանջում էր չզրկել երեխային «անմեղ խաղերից»: Իր բնական զարգացման ընթացքում՝ առօրյա կյանքում, ամենօրյա գործունեության ընթացքում երեխան ամենից առաջ առնչվում է խաղին: Խաղալ նշանակում է գործել, ստեղծագործաբար վերարտադրել կյանքում ստացած տպավորությունները, շփվել շրջապատի մարդկանց, ընկերների հետ, վերջիններիս և իր իսկ այս կամ այն արարքին տալ գնահատականներ: Խ. Աբովյանն առանձնահատուկ նշանակություն էր տալիս երեխայի խաղային գործունեության բնականության կողմին, ինչպես նաև խաղի՝ անփոխարինելի գեղագիտական նշանակությանը: «Կարդացողը ինքն էլ լավ կիմանա, որ էս գրած բաները ավելի ուրախության համար են էն պատճառով, որ բոլորը մեր խալխի խոսացած բաներն եմ հավա-

քել, թարգմանածներս էլ էնպես եմ դուրս բերել որ մեր խալխի սրտովն ըլի... Հույս ունիմ, որ ուրիշ մարդիկ դիա լավը շինեն» [1, 9-10]:

Աբովյանը բարձր էր գնահատում մանկական խաղերը՝ մասնավորապես ընդգծելով, որ յուրաքանչյուր խաղ ունի որոշակի դաստիարակչական նշանակություն, զարգացնում, հարստացնում է երեխայի միտքը, տալիս կենսականորեն կարևոր տեղեկություններ աշխարհի, կյանքի, մարդկանց և շրջապատի վերաբերյալ: Դեռևս 19-րդ դարում հայ մեծ լուսավորիչ-մանկավարժը շեշտում էր խաղի՝ երեխայակենտրոն ուսուցման միջոց և եղանակ լինելու հանգամանքը՝ խիստ կարևորելով, որ խաղի ընթացքում երեխան, ժամանակակից եզրաբանությամբ, ուսուցման օբյեկտից վերածվում է սուբյեկտի, որով առավել իմաստավորվում և արդյունավորվում է նրա խաղային գործունեությունը:

19-րդ դարի հայ ականավոր մանկավարժ, գրող և հասարակական գործիչ Ղազարոս Աղայանն իր ողջ կենսագրությամբ և ստեղծագործությամբ ամբողջովին նվիրվել է մատաղ սերնդի կրթության ու դաստիարակության գործին: Նա հանդես է եկել իբրև գործուն մանկավարժ և իր ողջ գիտակցական կյանքն ի սպաս դրել հայ տեսական և գործնական մանկավարժության զարգացմանը: Ղ. Աղայանի բեղուն մանկավարժական գործունեության համար վճռորոշ նշանակություն է ունեցել նրա ստեղծագործական խառնվածքը. նա հրաշալի մանկագիր էր, բազմաթիվ սիրված չափածո երկերի հեղինակ, հեքիաթագիր: Ղ. Աղայանը որպես մանկավարժ նպատակ ուներ զարգացնելու ուժեղ, խելոք, առաքինի երեխաներ և այդ առումով խորությամբ գիտակցելով խաղի հսկայական դերն ու արժեքը՝ իր մանկավարժական աշխատություններում հետևողականորեն անդրադառնում էր խաղի հիմնահարցին: Աղայանը գտնում է, որ երեխաներին հրապուրում է շրջապատի մարդկանց գործունեությունը, և նրանք ցանկանում են իրենց խաղերում նմանակել-վերարտադրել այն: Հետաքրքիր է, որ իր մեծ նախորդի՝ Խ. Աբովյանի նման, Աղայանը ևս ընդգծում է խաղի ստեղծագործական ասպեկտը, որը հնարավորություն է տալիս երեխային որոշակի դեր ստանձնելով՝ դառնալ դերակատար՝ գործունեության սուբյեկտ, միաժամանակ դառնալով թե՛ որպես որոշակի ուսուցողական գործունեություն իրականացնող, թե՛ նաև այդ գործունեության դաստիարակչական ազդեցության կրող: «Խաղացեք, ո՛վ մանկուկներ,– գրում է Աղայանը,– շատ խաղացեք, բայց թե՛ տիկնիկ և թե՛ բաժինք ձեր իսկ ձեռքով շինեցեք» [2, 27]:

Ղ. Աղայանը գործնական մանկավարժության ջատագով էր և նախաձեռնող: Նա Ս. Բաբայանի հրավերով մեկ տարի որպես դաստիարակ աշխատել է Թիֆլիսի նորաբաց նախակրթարանում և դրանից հետո որտեղ եղել և գործունեություն է ծավալել (Ախալցիխե, Երևան, Ալեքսանդրապոլ), առանձնահա-

տուկ ուշադրություն է դարձրել նախակրթարաններին՝ այն համոզումն ունենալով, որ «ծառը արմատից կդալարի, ուսումը՝ նախակրթարանից»: Երեխայի կյանքում խաղի հսկայական նշանակության հավաստումն Աղայանը գործնականում ստացավ վերոհիշյալ Ս. Բաբայանի մանկապարտեզում՝ մեծ հաճույք պատճառելով երեխաներին և երջանկությամբ լցնելով իր սեփական հոգին: «Այդ կարճ ժամանակամիջոցը,– գրում է Աղայանը,– դարձավ հայ մանկական գեղարվեստական գրականության զարգացման սկիզբը» [4, 524]:

Մեկ տարի գրագիտություն սովորեցնելով մանկապարտեզի սաներին՝ Աղայանը միաժամանակ ուսումնասիրեց նրանց նախընտրած պարապմունքների բնույթը, նախասիրած խաղերը, հոգեմտավոր աշխարհը: Աղայանը միանգամայն անսխալ կռահեց, որ մանկավարժն ու հատկապես մանկական գրողը նախ ինքը պետք է սովորի երեխաներից՝ ինչի՛ մասին, ինչպե՛ս գրել, ինչպիսի՛ խաղեր կազմակերպել, որպեսզի դրանք լինեն նպատակային, մանկավարժական առումով հիմնավորված և արդյունավետ: Սկզբնական շրջանում խաղերը պարզ գործողություններ են: Աստիճանաբար դրանք դառնում են նպատակաուղղված՝ ներառելով և հարստացնելով մանկավարժական ու դաստիարակչական բաղադրիչը: «Մանկության բարեկամներ» խաղում, օրինակ, Աղայանը նկարագրում է տարբեր միջավայրում ապրող երեխաների խաղերի բովանդակությունը և դաստիարակչական արժեքը [տե՛ս 3, 37]:

Ղ. Աղայանի՝ մանուկների համար հորինած խաղերն ու բանաստեղծությունները կենսունակ են, որովհետև գրված են անկեղծությամբ և մանուկների ներաշխարհի խոր իմացությամբ: Աղայանը երեխաներին սիրում էր անմնացորդ կերպով: Մանուկների աշխարհը և դաստիարակությունը նրա տարերքն էր: «Տիկնիկ» մանկական խաղը պարզաբանելով՝ Աղայանը գրում էր. «Երեխան ոգի ունի. ուզում է զվարճանալ, երգել, խաղալ, մտածել և դատել» [4, 204]:

Ղ. Աղայանը սեփական կենսափորձով հիմնավորում էր, որ յուրաքանչյուր խաղ ունի իր հատուկ նշանակությունը. զարգացնում է երեխայի այս կամ այն ունակությունը, հարստացնում միտքը, ապահովում նրա ներդաշնակ զարգացումն ու կրթությունը: Եվ վերստին ընդգծում էր մանկական խաղի՝ թեև որոշակի պայմանականությունների մեջ առնված, սակայն միանգամայն ազատ ստեղծագործական բնույթի գործունեություն լինելու հանգամանքը: «Արեգնազան կամ կախարդական աշխարհ» խաղում նա շեշտում է, որ խաղը երեխայի ինքնուրույն ստեղծագործական գործունեությունն է:

Մանուկների համար Ղ. Աղայանի հավաքած, մշակած խաղերի ոչ միայն թեմատիկան, այլև արտահայտչամիջոցներն ու ձևերը հետաքրքրական են, գրավիչ. դրանք ընկալվում են բնականորեն և ինքնաբերաբար: Բնությունը,

գյուղական բնապատկերը, գեղջկական անպաճույճ կենցաղը և աշխատանքը, ժողովրդական զրույցներն ու ավանդապատումներն Աղայանի ստեղծագործության նյութն ու բովանդակությունն են: Նրա մշակած խաղերը, գեղագիտական հաճույք պատճառելով, հարստացնում են մանուկների իմացական աշխարհը, խթանում ստեղծագործական մտածողությունը և ակտիվությունը, իսկ բնությունը, կյանքը ճանաչել տալու իմաստով՝ դրանք բարոյա-դաստիարակչական հսկայական նշանակություն ունեն: Ղ. Աղայանի՝ որպես գրական-հասարակական գործչի տեղն ու դերը հայ իրականության մեջ նշանակալից է ոչ միայն նրա ստեղծագործությամբ. նրա նկատմամբ մենք հարազատություն ենք զգում, որովհետև Աղայանը շատ մոտ է կանգնած ժողովրդական ակունքներին, իր հայկական արմատներին և հայ իրականությանը: Ուստի և նա բարձր է գնահատվել իբրև մանկավարժ, իբրև մանուկ սերնդի կրթության ու դաստիարակության գործի մեծ կազմակերպիչ ու տեսաբան:

Հովհաննես Թումանյանի բազմաժանր ստեղծագործության մեջ յուրահատուկ տեղ են զբաղեցնում ժողովրդական թեմաների, ավանդապատումների, առասպելների, լեգենդների, էպոսի, հեքիաթների մշակումները, մանկական անգերազանցելի բանաստեղծությունները, մանկական բանահյուսության նմուշների հանճարեղ մշակումները, որոնք աչքի են ընկնում ամենից առաջ իրենց խաղային բաղադրիչի հարստությամբ, պարզությամբ, բնականությամբ: Ուստի զարմանալի չէ, որ Հովհ. Թումանյանը եղել և մնում է ինչպես նախակրթարաններում, այդպես նաև հանրակրթական ուսումնական հաստատություններում «ամենաբեմադրվող» հեղինակը:

«Ես,– գրում է Թումանյանը,– իմ բոլոր հեքիաթներն ու զրույցներն էլ իմ ժողովրդից ու ժողովրդականից առել ու միշտ աշխատել եմ ինչքան կարելի է մոտիկ ու հարազատ մնալ» [5, 267]:

Նա այն համոզմանն էր, որ երեխան խաղում ամեն ինչ ընկալում է ուրախ ձևով, ինչը չափազանց կարևոր է նրա ընդհանուր զարգացման համար:

Հայ մեծ բանաստեղծը երեխաների համար ստեղծեց հայրենագիտական խաղեր: Նա գտնում էր, որ երեխաների համար խաղն անհրաժեշտություն է, մանկության ուղեկից, որը սնում է մանկան միտքը, նրան հաղորդում բազմապիսի գիտելիքներ շրջապատող աշխարհի, առարկաների, երևույթների մասին:

Հովհ. Թումանյանի համոզմամբ՝ մանկական խաղերը պետք է ուրախացնեն, զվարճացնեն, հաճելի լինեն երեխային և անպայման հարստացնեն նրա միտքը, «բան սովորեցնեն»: Հովհ. Թումանյանի ստեղծած խաղերն ունեն երեխաների ինչպես շարժողական ունակությունները զարգացնելու, այն է՝ ֆիզիկապես զարգացնող, այնպես էլ դիդակտիկ՝ ուսուցողական բնույթ («Առաջին

խաղ», «Աստղերի խաղ», «Գույների խաղ», «Հանելուկներ», «Հայկական առածներ», «Հայոց գետերը», «Աստղերի խաղը», «Դդումը», «Տառերի խաղ», «Սրամիտ հովիվը»):

Թումանյանը նամակներից մեկում գրում է. «Էս խառը ժամանակը ես էլ, ի միջի այլոց, զբաղված եմ և՛ հայրենագիտական, և՛ ուրիշ տեսակի խաղալիքներով, ասում եմ գուցե դրանով էլ մեր մանուկներին մի բանով օգնած լինենք հայանալու և մարդանալու…, էսպիսի ժամանակներում ոմանք իրենց գինուն են տալիս, ոմանք լռում ու ինքնամփոփ դառնում, ես որոշեցի էս տեսակ մի բան անեմ, օգուտ որ չլինի, վնաս հաստատ չի լինի» [6, 401]:

Հովի. Թումանյանը խաղն ու երգը համարում էր երեխայի հիմնական պահանջմունքը, հատկությունը: Խաղերն ուրախություն, բավականություն են պատճառում երեխային, զարգացնում ֆիզիկապես, մտավորապես: Ահա թե ինչու նույնիսկ «ամենախառը ժամանակներում» էլ խաղերի միջոցով երեխաների մտավոր, հոգևոր ու ֆիզիկական զարգացման խնդիրը Թումանյանի համար մնում էր կարևոր: «Մանկությունը մարդու կյանքի էն ամենաընդունակ շրջանն է,– գրում է Թումանյանը,– երբ նա չորս կողմից ընդունում է, սնունդ է առնում ու զարգանում շարունակ… Ահա էստեղ էլ հարց է առաջ գալիս՝ ի՞նչ սնունդ տալ և ի՞նչ ձևով տալ: Եվ ամեն բան, ինչ տրվում է խաղով, ուրախությունով՝ ընդունում է, հեշտ էլ յուրացնում» [10, 383]:

Թումանյանը անհրաժեշտ էր համարում խաղի միջոցով երեխային տեղեկություններ տալ շրջապատող աշխարհի, իրական երևույթների մասին. «Մենք անծանոթ ենք մեր հայրենիքին, նրա բնությանը, նրա կյանքին, նրա անցյալին ու ներկային: Մեր պատմության էս սև ու դժբախտ ժամանակի շրջանում շատ ու շատ սովորությունների հետ, մենք թողել ենք և մեր ազգային գեղեցիկ ու իմաստալի խաղերը, մոռացել ենք նրա ահագին նշանակությունն ու ազդեցությունը կյանքի մեջ: Սա ժամանակավոր թմրություն է, որից հետո մենք մտնում ենք վերածնության, վերանորոգության, կազդուրման, նոր կենդանի աշխարհ առողջ ու հոգևոր շրջանը» [6, 402]:

Կարևորելով հայեցի դաստիարակությունը՝ Հովի. Թումանյանը հայ մտավորականի, արվեստագետի գերագույն նպատակը համարում էր հայրենիքին ու ժողովրդին նվիրված կիրթ քաղաքացու դաստիարակությունը, քաղաքացի, որի բնորոշ գծերից են նաև մարդասիրությունը, ազնվությունը, համեստությունը: Մեկ այլ տեղում մեծ մարդասերը խաղերի դաստիարակչական նշանակության մասին գրում է. «Կաշխատենք խաղերի միջոցով ծանոթություն տալ թե՛ Հայաստանի, թե՛ Կովկասի ջրերից, լեռներից, լճերից, կենդանական ու բուսական աշխարհից, որ մեր երեխաներն ու պատանիները ճանաչեն ու սիրեն

իրենց հայրենիքը: Սիրեն ոչ թե կույր ազգասերի սիրով, այլ գիտակից ինտիլիգենտ մարդու սիրով, որ սերն ազնիվ լինի առողջ ու բովանդակալի» [6, 386]:

Թումանյանի՝ մանուկների համար հորինված խաղերի մեջ կա աստղային երկնքի մասին մի խաղ, որը բնութագրելիս բանաստեղծը գրում է. «Հաճախ նայեցեք երկնքին: Ձեր հոգին կմեծանա ձեր սիրտը կազնվանա: Մարդիկ միշտ ցած նայելով հոգով են ցածրանում» [9, 373]: Այդ խաղը համարվում է Թումանյանի կազմած խաղերից ամենաբարդը և որոշակի տարիքային հասունություն է պահանջում:

Ընդհանրացնելով նկատենք, որ Հովհ. Թումանյանը երեխաների համար հավաքեց և մշակեց ժողովրդական բանահյուսության հոգևոր գանձերը՝ ստեղծելով հայրենագիտական խաղեր՝ այդ հարցում դրսևորելով ոչ միայն նրբամիտ գեղագետի հատկություններ, այլ նաև մանկավարժական խորաթափանցություն և հոգեբանի խոր ունակություններ:

Թումանյանը գտնում էր, որ երեխաների համար խաղը անհրաժեշտություն է, մանկության պարտադիր ուղեկից, որովհետև խաղի միջոցով միայն կարելի է զարգացնել երեխայի միտքը, ձևավորել բարոյական որակներ, հաղորդել նրան բազմապիսի գիտելիքներ շրջապատող աշխարհի առարկաների, երևույթների մասին:

Մեծ բանաստեղծի հորինած խաղերն այսօր էլ չեն կորցրել իրենց այժմեականությունը, ավելին՝ դրանք լայն տարածում են գտել հայկական դպրոցներում՝ շարունակելով պահպանել իրենց կրթական և դաստիարակչական ազդեցությունն ու նշանակությունը:

2007 թ. վերահրատարակվել է թումանյանական 5 խաղ՝ «Հայոց գետերը», «Հայկական առածանին», «Թանկագին խաղեր», «Հայկական հանելուկներ», «Տառերի խաղ»: Օգտագործելով այս խաղերը՝ ինչպես ծնողները, այնպես էլ դաստիարակները կարողանում են լուծել հայրենագիտական, կրթադաստիարակչական կարևոր, արդի խնդիրներ:

Հարկ է նշել, որ մեծ բանաստեղծը ոչ միայն առաջարկեց տարբեր խաղեր, այլ ցույց տվեց դրանց կազմակերպման մեթոդները, մեկնաբանման եղանակները, կանոնների մատուցման ձևերը:

Այսպիսով, հայ գեղարվեստական մտքի տիտանները՝ Աբովյան, Աղայան, Թումանյան, միաժամանակ լինելով նաև իրենց ժամանակի լավագույն մանկավարժները, ըստ ամենայնի արժևորել են, թե ինչ դեր ունեն մանկական խաղերը երեխայի ընդհանուր զարգացման և դաստիարակության գործում: Խաղը եղել է ժողովրդական մանկավարժության ամենակարևոր բաղկացուցիչներից մեկը: Յուրաքանչյուր խաղ ունեցել է իր նշանակությունը ու նպատակադրումը: Դրա-

նով ժողովուրդը մատաղ սերնդին աստիճանաբար վարժեցրել ու նախապատրաստել է կյանքի համար՝ նրան տալով որոշակի հմտություններ:

Ցավոք, շատ արժեքավոր խաղեր այսօր մոռացվել են: 21-րդ դարում կյանքը նոր ձև ու բովանդակություն ունի, առաջադրում է նոր պահանջներ, սակայն, այնուամենայնիվ, ժողովրդական և հեղինակային խաղերը մշտապես մնում են ուրախ, երջանիկ մանկության ուղեկիցը:

Այսօր երեխաների և դեռահասների մեծամասնությունը կախվածություն ունի սոցիալական ցանցերից. համակարգչային խաղերը կլանել են նրանց, օրական 2.5-3 ժամ սոցիալական ցանցերի վրա են ծախսում: Սա պետք է անհանգստացնի ծնողներին, դպրոցին, մանկավարժ հոգեբանին, սոցիալական մանկավարժին:

Միշտ պետք է հիշել, որ խաղը բարոյական դաստիարակության կարևորագույն միջոց է: Ապագայում ինչ էլ որ դառնա՝ օպերատոր, ուսուցիչ թե օդաչու, միևնույնն է, երեխան միշտ զգալու է ուրախ, գրավիչ խաղի պահանջը, քանի որ մանկական խաղն իր ծագումով ու բովանդակությամբ ազգային-ժողովրդական բնույթ ունի և փոխանցվում է սերնդեսերունդ:

Գրականություն

1. Խ. Աբովյան, Պարապ վախտի խաղալիք, «Հայպետհրատ», Երևան, 1955:
2. Ղ. Աղայան, Երկերի ժողովածու, Ա հատոր, Երևան, 1950:
3. Ղ. Աղայան, Երկերի ժողովածու, Բ հատոր, Երևան, 1950:
4. Ղ. Աղայան, Երկերի ժողովածու, Դ հատոր, Երևան, 1950:
5. Ղ. Աղայան, Իմ կյանքը, «Հայ տետրակ», Երևան, 1955:
6. Հ. Թումանյան, Երկերի ժողովածու, հատոր 4:
7. Ն. Թումանյան, Հուշեր և զրույցներ, Երևան, «Լույս», 1987:
8. Հ. Թումանյան, Տխուր հիշողություններ, «Հորիզոն», 1912 հունիսի 20:
9. Ն. Թումանյան, «Աղայանի և Թումանյանի մտերմությունը»՝ Հայաստանի պատմության և գրականության ինստիտուտի տեղագիր պարբերականում, 1938, թիվ 1:
10. Հովհաննես Թումանյան, Քառյակներ, պոեմներ, Երևան, «Լույս», 1986:
11. Ա. Շավարշյան, Հայ մանկավարժներ, Երևան, 1961, գիրք Բ, 2 մաս:

ОЦЕНКА ВОСПИТАТЕЛЬНОГО ЗНАЧЕНИЯ ИГРЫ В ПРОИЗВЕДЕНИЯХ Х. АБОВЯНА, Г. АГАЯНА И ОВ. ТУМАНЯНА

Ароян Лиза
Григорян Зарине

Резюме

Ключевые слова: *воспитание, любовь, достоинство, развитие, письмо, язык*

Крупнейшие представители армянской педагогической мысли Х. Абовян, Г. Агаян, Ов. Туманян глубоко изучили основные вопросы детской игры, особо подчеркнув ее воспитательное значение, отметив, что игра – школа развития личности ребенка. Они собрали и переработали сокровища армянского фольклора и создали для детей родиноведческие игры, основываясь на глубоких знаниях психологии и педагогики. Титаны мысли целью национального воспитания считали подготовку человека-гражданина, преданного своей родине и народу. Это честный человек-патриот и гуманист. Они считали, что сделать эти и другие нравственные ценности достоянием личности можно и через игру. Как Х. Абовян, так и Г. Агаян и Ов. Туманян четко определили роль игры в дальнейшей судьбе ребенка, и каждая разработанная ими игра была целенаправленной и значимой для формирования определенных качеств личности. По мнению Ов. Туманяна, игра должна быть приятной для ребенка, доставлять ему радость и обогащать его мысль. Великие мыслители не только разработали ряд сказок, но и предложили методику их изучения.

THE IMPORTANCE OF EDUCATIONAL GAME FUNCTION IN THE COMPOSITIONS OF KH. ABOVYAN, GH. AGHAYAN, HOVH. TOUMANYAN

Haroyan Liza
Grigoryan Zarine

Summary

Key words: *upbringing, love, dignity, development, writing, language*

The most well-known Armenian pedagogists Kh. Abovyan, Gh. Aghayan and H. Toumanyan deeply investigated the main concern of a child game. They spontaneously emphasized the importance of educational game, considering it as the main school of a child development.

They collected, cultivated the spiritual treasure of widespread pagan poetry and they created patriotic games, expressing in it the skill of psychological pedagogy, because they knew very well the psychology and the inner world of a child.

The Armenian titans considered that the purpose of a child's education in an Armenian manner was the education of doting fatherland and people as a person-citizen which peculiar lines were patriotism, humanism and honesty, so they erected that children could learn these moral valuable quality through their lovely games. Kh. Abovyan, Gh. Aghayan, H. Toumanyan estimated what role had the games for the future. Every game had been cultivated by them had their meaning and intention. H. Toumanyan wrote that every game for a child must be joyfull, pleasant, enrich a child brain so called "educational games". They not only collected, cultivated the widespread games, but also they showed the methods of teaching them, explaining them, the rules and the purposes.